

2969

ԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

9(47)  
Տ-26

ԼՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1938



ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Տպված է

- 10-րդ հջում—ճորանքը  
10-րդ հջ ն. 10 տող—նովգորող  
10-րդ հջ ն. 9 տող—Ուկր  
16-րդ հջ վ. 5 տող —  
17-րդ հջ ն. 17 տող—Բոլոնիկով  
17-րդ հջ վ. 20 տող—Ուկրաինայում  
18-րդ հջ վ. 4 տող—Պյոտրի  
19-րդ հջ ն. 12 տող—1-ի  
20-րդ հջ ն. 13 տող—Յավանները  
25-րդ հջ վ. 5 տող—միությունը  
27-րդ հջ վ. 7 տող—հեղափոխությունը  
28-րդ հջ վ. 16 տող—48-րդ  
31-րդ հջ ն. 8  
35-րդ հջ վ. 19 տող

- պետք է լինի  
ստորևները  
նովգորող  
Ուկր  
բոլոնիկով  
Բոլոնիկովի  
Ուկրաինայում  
Պյոտրյան  
II-ի  
Ավանները  
ընկերությունը  
հետամնացությունը  
49-րդ  
Յուդենիչի պատմությունը  
Սպիտակ գեներալներին ջախջախումը  
կամավոր

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Տարրական դպրոցում պատմության դասավանդման խնդիրը կայանում է նրանում, Վորպեսդի ԽՍՀՄ-ի պատմության կոնկրետ պատմական նյութի հիման վրա հայտարարել աշակերտներին առաջ մեր յերկրի հերոսական անցյալը և զարմանալի ներկան։ ԽՍՀՄ-ի պատմության դասընթացից յերեխաները պետք է իմանան, թե ինչպես ԽՍՀՄ-ի ժողովուրդներն իրենց բազմազարյան պատմության ընթացքում մի անգամ չէ, վոր դուրս են յեկել պայքարի շահագործման ճնշման դեմ, ազգային ճնշման դեմ, ոտարերկրյա ինտերվենտների դեմ։ Պատմության դասընթացը պետք է յերեխաներին հասկացողություն տա Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության համաշխարհային—պատմական նշանակության մասին։

Ուսումնասիրելով յերեխաների հետ ԽՍՀՄ-ի ժողովուրդներին փառավոր անցյալը, նրանց հերոսական պայքարն ոտարերկրյա ինտերվենտների դեմ, պրոլետարիատի համառ պայքարը ցարիզմի և կապիտալիզմի դեմ, տարրական դպրոցի ուսուցիչը պետք է զինի յերեխաներին Լենինի-Ստալինի մեծ դերի հասկացողությամբ, վորը հենց ցարական Ռուսաստանի ժողովուրդներին հասցրեց Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության հաղթանակին։

Ուսուցչի խնդիրն է վոչ միայն յերեխաներին զինել ԽՍՀՄ-ի պատմության գիտելիքներով, այլև մշակել նրանց մեջ կոմունիստական աշխարհայեցողություն, դաստիարակել նրանց խորհրդային հայրենասերի վոգով, աննախընթաց անձնվիրության վոգով դեպի սոցիալիստական հայրենիքը, դաստիարակել նրանց ալրող, անհաշտելի ատելության վոգով դեպի նրա բոլոր թշնամիները։ Սյս խնդիրն իրականացվում է ինչպես կոնկրետ պատմական նյութի մարքս-լենինյան լուսաբանությամբ, այնպես ել նրա կապով այժ-

Քարգ. խմբ. Խ. Մ անոյան  
Տեխ. խմբագիր Զ. Մ արուխյան  
Սրբագրիչ Մ. Հ ա խ ն ա զ ա ը յ ա ն

Գլավխտի լիազոր հ. 6667 Գատկեր № 505 Տիբաժ 5000

Պետհամալսարանի հրատարակչության տպարան. Յերևան

47-87

15839



մեյականության հետ, մեր վիթխարի սոցիալիստական շինարարության հետ:

Տարրական դպրոցում պատմության դասավանդման առաջադրվող պահանջները բոլորում են կուսակցության ու կառավարության դիրքերի վրա ցուցմունքներից, քաղաքացիական պատմության դասավանդման մասին:

Այդ ցուցմունքները տրված են կուսակցության և կառավարության վորոշումներում դպրոցում քաղաքացիական պատմության դասավանդման մասին, ընկերներ Ստալինի, Կիրովի ու ժողովի հայտնի դիտողություններում պատմության դասագրքերի մասին և վերջապես, Կառավարական Հանձնաժողովի ժողովի վորոշումներում: Այդ դիրքերի վրա ցուցմունքները դասատուն պետք է խորը ուսուցնասիրի ու ղեկավարվի նրանցով պատմության իր աշխատանքներում:

Ժողովուրդը և Համ Կ(բ) ԿԿ 1934 թ. մայիսի 16-ի իրենց վորոշման մեջ գրեցին հետևյալը. «Աշակերտների կողմից պատմության դասընթացը հաստատապես յուրացնելու վճռական պայման է հանդիսանում, պատմական-ժամանակագրական հաջորդականության պահպանումը պատմական անցքերի շարադրության մեջ, աշակերտների հիշողության մեջ անպայման ամրացնելով պատմական կարևորագույն յերևույթները, պատմական գործիչներին, ժամանակագրական թվականները: Պատմության միայն այդպիսի դասընթացը կարող է ապահովել աշակերտների համար պատմական նյութի անհրաժեշտ մատչելիությունը, ակներևությունը ու կոնկրետությունը. այս հիման վրա միայն հնարավոր է պատմական անցքերի ճիշտ վերլուծումն ու ճիշտ ընդհանրացումը, վորոնք աշակերտին մոտեցնում են պատմության մարքսիստական ըմբռնմանը»:

Կատարելով այդ դիրքերի վրա ցուցմունքները, ուսուցիչը դասերի ժամանակ պետք է խՄՀՄ-ի պատմության կոնկրետ փաստեր շարադրի աշակերտներին:

ԽՄՀՄ-ի պատմության դասընթացը պետք է մաքսիմալ չափով կոնկրետ լինի: Պատմական նյութը պետք է ցույց տալ աշակերտին նրա համար մատչելի պատկերների ձևով: Աշակերտները պետք է մաքսիմալ կոնկրետություն պատկերացնեն և՛ հողին ամրացված գյուղացուն, վորը կոռ եր քաշում, իր տիրոջը թահրա յեր տալիս, և ամենափոքր մեղքի համար փայտերով ծեծվում եր մինչև կիսամահ դրության մեջ ընկնելը, և ճորտ գյուղ

ղացիների աշխատանքի հաշվին ապրող, խոշոր հողատեր, նրա բոյարին-տիրոջը: Նրանք պետք է իմանան, թե ինչպես Մոսկվայի բանվորները բարեկազմներ էյին կառուցում և հերոսաբար ճակատամարտի էյին դուրս գալիս ցարական գործերի դեմ, պաշտպանելով այդ բարեկազմները 1905 թ. դեկտեմբերին: Նրանք պետք է պատմության դասին ապրեն խորհուրդների II համագումարի պատգամավորներին ուրախությունը, վորոնք 1917 թ. հոկտեմբերի 25-ին լսեցին ընկեր Լենինի ճառը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի մասին և այլն: Շարադրության պատկերավորությունն ու դիտողականությունը, յերեսաներին՝ նրանց համար առավելապես մատչելի, կենդանի և պատկերավոր ձևով պատմական նյութ հաղորդելն անհրաժեշտ պայման է նրա համար, վորպեսզի հաջորդվող դիտելիքները հաստատորեն մտնեն աշակերտության գիտակցության մեջ և հարստացնեն այն:

Տարրական դպրոցում ԽՄՀՄ-ի պատմությունը պատկերավոր ձևով և մատչելիորեն շարադրելուն հասնելու գործում, մեծ դեր են խաղում ուսուցնադիտողական ձեռնարկները: Յեվ ուսուցչի պատմածքը, և՛ գրույցը, և՛ աշխատանքը, գրքով պետք է ուսուցնադիտողական ձեռնարկներով իլյուստրացիայի յինթարկվեն: Ուսուցիչը պետք է մաքսիմալ եֆֆեկտիվորեն ոգտագործի առաջին հերթին դասագրքի իլյուստրացիաները, աշակերտների հետ միասին դասի ժամանակ ըմբռնելով և վերլուծելով նրանց, աշակերտների առջև նրանց բովանդակության մասին հարցեր դնելով: Իբրև լրացում դասագրքի իլյուստրացիաների, ուսուցիչը պետք է ոգտագործի դասերի ժամանակ պատմական նկարներ, պատմական քարտեզներ, ալբոմներ, դիալոգիտիֆներ և ինքնագործ ուսուցնադիտողական ձեռնարկներ՝ լրագրերի և ամսագրերի իլյուստրացիաներից:

ԽՄՀՄ-ի պատմության դասավանդման ժամանակ տարրական դպրոցում ուսուցիչը հենվում է պրոֆ. Շեստակովի խմբագրած ԽՄՀՄ-ի պատմության համառոտ դասագրքի վրա: Այդ դասագրքը, վորը Համ Կ(բ) ԿԿ-ի անմիջական ղեկավարություն է ստեղծվել, վոչ միայն հիմնալի դասագրք է հանդիսանում աշակերտության համար, այլև լավ ձեռնարկ է ուսուցչի աշխատանքի համար: Դասագրքին ամենից առաջ ուսուցչին փաստերի ընտրություն է տալիս, վորոնք մատչելի յեն III և IV դասարանների աշակերտների համար: Սրա հետ միասին, դասագրքը պատ-



մական փաստերի ու անցքերի մարքս-լենինյան գնահատական և տալիս և սրանով ապահովում և աշակերտության կոմունիստական դաստիարակության, նրանց խորհրդային հայրենասերի վոգով դաստիարակելու լայն հնարավորությունները:

Պատրաստվելով դասերին, ուսուցիչն այդ պատճառով վոչ միայն պետք է ուսումնասիրի դասագրքում յեղած փաստական նյութը, այլև խորը մտածի այն ընդհանրացումների մասին, վորոնք այդ նյութի վերաբերյալ տրվում են դասագրքում և մատչելի ու հասկանալի ձևով, այդ բոլոր ընդհանրացումները հասցնի աշակերտության գիտակցությանը:

Սակայն, հենվելով պատմության դասագրքի վրա, նրա կառուցվածքի և ժամանակագրական հետևողականության վրա՝ իր աշխատանքներում, ուսուցիչը չպետք է սահմանափակվի դասերի ժամանակ միայն դասագրքի բովանդակությունը կրկնելով: Դասագրքում պատմության միայն այն միևնույն և տրվում, վորն աշակերտը պետք է ամրացնի իր հիշողության մեջ: Սակայն աշակերտները հաճախ չեն սահմանափակվում նյութի այն ծավալով, վորը տրված է դասագրքում: Նրանք ուղղում են իմանալ նաև թե ինչպես վերջացավ Շամիրի կյանքը, ինչպիսի հանգամանքներում սպանվեց Ն. Ե. Բաումանը, և ինչպես լենինը 1917 թ. Ռուսաստան յեկավ և մի շարք ուրիշ մանրամասնություններ, վորոնք դասագրքում չկան: Այս պատճառով ուսուցիչը պետք է պատկերավոր և մատչելի ձևով շարադրի նյութը վոչ միայն դասագրքի ծավալով, այլև դասագրքի ծավալը հաճախ մեծացնելով, հատկապես 4-րդ դասարանում: Ուստի, վորպեսզի իր գիտելիքների ամբողջ զինվածությունը գնալ դասի, ուսուցիչն ինքը պետք է պատմությունը շատ ավելի մեծ ծավալով իմանա, քան այդ տրվում է դասագրքում: Առաջին հերթին, իբրև դասագրքին շատ ավելի արժեքավոր լրացուցիչ նյութ են հանդիսանում մարքսիզմ-լենինիզմի կլասիկների յերկերը:

Անհրաժեշտ է մաքսիմալ չափով ոգտագործել պատմության դասագրքը, այսինքն վոչ միայն նրա տեքստն ոգտագործել, այլև նկարները, պատմական քարտեզներն ու ժամանակագրական աղյուսակը: Ուսուցիչը դասի ժամանակ պետք է ժամանակ գրտնի և նրա համար, վորպեսզի աշակերտների հետ միասին գիտել դասագրքի նկարները, և նրա համար, վորպեսզի կազմակերպել աշակերտների հետ միասին աշխատանք դասագրքի պատմական քարտեզների վրա, սովորեցնելով աշակերտներին դասի ժամանակ

դասագրքի պատմական քարտեզների վրա գտնել անհրաժեշտ աշխարհագրական անունները:

Դասագրքը պետք է ոգտագործել նաև նրա միջոցով պատմական նյութն ամրացնելու համար, վորը դասատուն շարադրել է դասի ժամանակ: Այդ ամրացումը կատարվում է ուսուցչի պատմածից հետո, աշակերտության կողմից հողվածի առանձին մասերի բարձրաձայն ընթերցման և ուսուցչի կողմից դրած հարցերին պատասխանելու միջոցով:

Պատմության աշխատանքներում ուսուցիչը մեծ ուղղորդություն պետք է նվիրի կրկնողության հարցերին: Այս աշխատանքը պետք է տանել վոչ միայն վորոշ հաշվառության շրջաններում, այլև սխտեմատիկորեն, որից-որի Պատմության կրկնողությունը պետք է տեղի ունենա և դասի սկզբում, և դասատույի կողմից նյութը շարադրելուց հետո, և ամբողջ գլուխն անցնելուց հետո և ստուգումներից առաջ (IV դասարանում): Կրկնողություն անցկացվում է և՛ աշակերտի կողմից անցած նյութը պատմելու միջոցով, և՛ նրանց կողմից հարցերին պատասխանելու միջոցով: Հարցերն այնպես պետք է կազմել, վորպեսզի աշակերտների կողմից փաստական նյութի յուրացումն հայտարարելու հետ միասին, հայտարարվի նաև նրանց կողմից պատմության մարքսիստական ըմբռնումը: Ծրագրում կրկնողության դասերը ցույց են տրված առանձին գլուխներն անցնելուց հետո: Ուսուցչի խնդիրն է այդ դասերը նոր նյութ շարադրելով զբաղեցնել, այլ ճշգրիտ կերպով պահպանել այդ դասերը և խնամքով պատրաստվել այդ դասերին:

Տարրական դպրոցում պատմության դասընթացը կազմված է յերկու տարում անցնելու հաշվով: Յերրորդ դասարաններում, վորտեղ պատմության դասավանդմանը տրվում է 40 ժամ, աշակերտները տարվա ընթացքում պետք է անցնեն դասընթացի ըսկզբից մինչև Պետրոս I: IV դասարաններում, վորտեղ պատմության դասավանդմանը տրվում է 80 ժամ տարում, աշակերտները պետք է անցնեն Պետրոս I-ից սկսած մինչև ԽՍՀՄ-ի պատմության դասընթացի վերջը:

Այս ամբողջ նյութը ծրագրում բաժանված է դասերի. յուրաքանչյուր դասին տրվում է թեմատիկա և ուսումնական նյութ:

Ուսուցչի պարտականությունն է այս ծրագրի հիման վրա ԽՍՀՄ-ի պատմության ուսումնասիրությունն այնպես կազմակերպել, վորպեսզի մեր աշակերտությունը հիմնալի կերպով իմանա մեր հրաշալի հայրենիքի հերոսական պատմությունը:



ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՄՈՏԱՎՈՐ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ  
ԺԱՄԱՆԱԿԻ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

|                                                                                 |        |
|---------------------------------------------------------------------------------|--------|
| Ներածութիւն                                                                     | 1 ժամ  |
| I Մեր հայրենիքը հեռավոր անցյալում                                               | 6 »    |
| II Կիւսան պետութիւն                                                             | 8 »    |
| III Արեւելեան Յեզրոպան մոնղոլական նվաճողների իշխանութիւն տակ                    | 5 »    |
| IV Ռուսական ազգային պետութիւն ստեղծումը                                         | 2 »    |
| V Ռուսական պետութիւն լայնացումը                                                 | 3 »    |
| VI Գյուղացիական պատերազմները և ճնշված ժողովուրդների ազատամարտիչները XVII դարում | 9 »    |
| <hr/>                                                                           |        |
| Ընդամենը                                                                        | 34 ժամ |
| Կրկնողութիւն համար ուսումնական տարվա վերջում                                    | 6 »    |
| <hr/>                                                                           |        |
| Բոլորը                                                                          | 40 ժամ |

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

|                                                                     |         |
|---------------------------------------------------------------------|---------|
| VII XVIII դարի Ռուսաստանը—կարվածատերերի և վաճառականների կայսրութիւն | 7 ժամ.  |
| VIII Ցարական Ռուսաստանը վորպես Յեզրոպայի ժանդարմ                    | 13 »    |
| IX Կապիտալիզմի աճումը ցարական Ռուսաստանում                          | 12 »    |
| X Բուրժուական առաջին հեղափոխութիւնը Ռուսաստանում                    | 12 »    |
| XI Բուրժուական յերկրորդ հեղափոխութիւնը Ռուսաստանում:                | 3 »     |
| XII Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնը Ռուսաստանում      | 6 »     |
| XIII Ռազմական ինտելիցենցիա: Բաղաքացիական պատերազմ                   | 11 »    |
| XIV Յերկրի տնտեսութիւնը վերականգնելու համար խաղաղ աշխատանքի անցնելը | 3 »     |
| XV. ԽՍՀՄ-ն հաղթանակած սոցիալիզմի յերկիր և                           | 8 »     |
| <hr/>                                                               |         |
| Ընդամենը                                                            | 75 ժամ  |
| Կրկնողութիւն համար տարվա վերջում                                    | 5 »     |
| <hr/>                                                               |         |
| Բոլորը                                                              | 80 ժամ. |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Գյուղական դպրոցում ուսումնական պլանով պատմութիւնն ալիւլի ժամեր են տրված, քան քաղաքի դպրոցում — III դասաբանում 8 ժամ, IV դասաբանում — 1 ժամ: Այս դասերն ուսուցիչը պետք է դասավորի ըստ թեմաների կրկնողութիւն համար:

Ծ Ր Ա Գ Ի Ր<sup>1)</sup>

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1-ին դաս: Ներածություն

Մեր հայրենիքը ԽՍՀՄ-ն է: ԽՍՀՄ-ը սոցալիզմի յերկիր: ԽՍՀՄ-ը ամենամեծ, հարուստ, հզոր և յերջանիկ յերկիրն է աշխարհում: ԽՍՀՄ-ի ժողովուրդների բարեկամութիւնը: Աշխատանքն ընդհանուր շահի համար: Մեր յերկրի մեծ կառուցումը և նրա ղեկավար կոմունիստական կուսակցութիւնը:

Մեր յերկրի ժողովուրդների կյանքն անցյալում: Մեր յերկրի ժողովուրդների պայքարն իրենց ճնշողների ու թշնամիների դեմ:

Ի՞նչ է պատմում պատմութիւնը: Ի՞նչու պետք է պատմութիւն իմանալ:

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՆՑՅԱԼՈՒՄ

2-րդ դաս: Ինչպես ելին ապրում մաքիկ հեռավոր անցյալում

Մենք վորտեղից ենք իմանում հեռավոր ժամանակներում ապրող մարդկանց կյանքի մասին: Մեր յերկիրը հեռավոր անցյալում: Հին վորսորդները: Քոչվոր-անասնապահները և յերկրագործները:

3-րդ դաս: Տոմարից դեպի պետություն

Տոմար և ցեղեր: Տոմարական կարգեր (հավասարութիւնը): Անհավասարութիւն և սննդամթերքների ու գործիքների մասնավոր սեփականութիւն ծագումը: Դասակարգների ու պետութիւն ծագումը:

4-րդ դաս: Առաջին պետություններն Անդրկովկասում և միջին Ասիայում

Ցեղերի միավորումն Անդրկովկասում և Միջին Ասիայում յերեք հազար տարի սրանից առաջ: Անդրկովկասի յերկրի բնու-

<sup>1</sup>. Ծրագիրը կազմված է Ի. Գիտտիսի կողմից (Ուսուցիչների վորակավորման բարձրացման Լենինգրադի ինստիտուտ) և խմբագրված է ԼԺԿ-ի դպրոցների կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի պատմութիւն կաբինետի կողմից:



թյունը և բնակչութիւնը: Ուրարտու պետութիւնը: Պետութեան կառավարողների ռազմական արշավանքները: ճորտերը և ճորտատերերը: Հնագույն քաղաքները:

5-րդ դաս: Սիբիրի և Աւելյան ցեղապաշտի հիմնադրուհիները.

Հարավային տափաստանների քոչվոր-անասնապահները (սկյութացիները): Հունական քաղաքները Սեւ ծովի հյուսիսային ափերում: Սալմակի ղեկավարութեամբ ճորտերի ապստամբութիւնը:

Քոչվորների (հոնների) հարձակում Ասիայից հարավային տափաստանների վրա:

6-րդ դաս: Սլավոններ

Արեւելյան Յելլերպայի բնութիւնը: Սլավոնական ցեղերը. նրանց կյանքը, աշխատանքը և կենցաղը: Տոհմական կարգերը: Իշխանների ու բոյարների յերևան գալը: Սլավոնների հարեանները: Առևտուր հարեանների հետ: Պատերազմներ հարեանների հետ:

7-րդ դաս. կրկնություն

## II. ԿԻՅԵՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

8-րդ դաս: Կիևյան իշխանության կազմավորումը.

Վարյագները և նրանց հարձակումները: «Ճանապարհ վարյագներից հոլաների մոտ»: Վարյագ իշխան Ռյուրիկը նովգորոդում: Իշխան Ռեդի և Կիևի պետութեան կազմավորումը: Ունգրի արշավանքը Յարզրադի վրա: Կիևյան Ռուսիան իբրև ուժեղ պետութիւն:

9-րդ դաս: Իշխան իգորն, իշխանուհի Ոլգան և իշխան Սվյատոսլավը.

Իշխան Իգորը և նրա արշավանքները: Պոլյադչին իբրև բնակչութեան համար ծանր պարհարի: Իգորի սպանութիւնը զրեվլանների կողմից:

Իշխանուհի Ոլգայի վրեժը: Ոլգայի ճանապարհորդութիւնը

Յարզրադ: Սլավոնների հեթանոսական հավատքը: Քրիստոնեյութեան ընդունելն Ոլգայի կողմից:

Խշխան Սվյատոսլավը: Սվյատոսլավի դանուբյան արշավանքները: Սվյատոսլավի սպանվելը:

10-րդ դաս: Քրիստոնեւորդան մուսքը

Իշխան Վլադիմիրը: Քրիստոնեւորդութեան մուտքը: Ժողովրդական ապստամբութիւնները նոր հավատքի դեմ: Քրիստոնեւորդութեան մուտքը Ռուսաստանի զարգացման մեջ մի առաջնութեան քայլ եր հեթանոսութեան համեմատութեամբ: Մատենագրութիւն և ավելի բարձր բյուզանդիական կուլտուրայի հանդես գալը Սլավոնների մոտ: Տարեգրութիւն:

11-րդ դաս: Ժողովրդական տարեային տպստութիւններ

Կիևի իշխանության մեջ

Յարոսլավ իշխանը: Կիևը Յարոսլավի ժամանակ (քաղաքը և նրա բնակիչները, իշխանը և գուգաղը): Իշխանի դատարանը և «Ռուսական Պրավդան»: Վեչե: Իշխանական և բոյարական կալվածատները: Ռամիկները ճորտացման սկիզբը:

Գյուղացիների և քաղաքի բնակիչների ապստամբութիւնները իշխանների ու բոյարների դեմ: Քաղաքի ճնշված բնակչութեան ապստամբութիւնը Կիևում 1113 թվին և Վլադիմիր Մոնոմախին իշխան հրավիրելը: Կիևի պետութեան ուժեղացումը Վլադիմիր Մոնոմախի ժամանակ:

12-րդ դաս: Նովգորոդյան յեղիբը

Պայքարը ռուս իշխանների միջև XII դարում: Պոլովցիների ասպատակութիւնները: Ժողովրդական յերգերն ու ասվածքները հսկաների մասին (բիլինաները):

Կիևի իշխանութեան մասնատումը: «Մոսք Իգորի գնդի մասին» — կոչ գեպի միութիւն:

Նովգորոդյան յերկիրը և նրա հարստութիւնները: Նովգորոդի առևտուրը: Կառավարումը բոյարների ու վաճառականների կողմից: Վեչե: Իշխանները Նովգորոդում: Նովգորոդի ժողովրդի ապստամբութիւնները բոյարների ու վաճառականների դեմ:



13-րդ դաս: Նավգորոդցիների պայքարը օվեդների ու գերմանացիների դեմ:

Շվեդների հարձակումը Նովգորոդյան յերկրի վրա: Շվեդները ջախջախումը Նեվայի վրա Նովգորոդի իշխան Ալեքսանդրի կողմից: Գերմանացի—ասպետների հարձակումը Նովգորոդյան յերկրի վրա: Նովգորոդի ժողովուրդը Ալեքսանդր Նեվսկու դեկավարությամբ գերմանացի հափշտակիչների դեմ մղած պայքարում: Սառցի ջարդը և գերմանական բռնարար-շուն-ասպետներին դուրս քշելը:

14-րդ դաս: Սուզդալյան Ռուսիա:

Վոլգայի և Ուկայի միջև գտնված յերկրները և նրանց բնակիչները: Ավերված հարավից յեկած վերաբնակիչները: Սուզդալյան առաջին իշխանները և բոյարական տիրակալությունների հպատակեցումը նրանց կողմից: Մոսկվայի սկիզբը: Սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկին: Բոյարական դավադրություն Անդրեյ Բոգոլյուբսկու դեմ: Վլադիմիր-Սուզդալյան իշխանությունը իշխան Վսևոլոդի ժամանակ: Վլադիմիր-Սուզդալյան իշխանության մասնատումը XIII դարում:

15-րդ դաս: Կրկնություն:

III ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՆ ՄՈՆՂՈՒԱԿԱՆ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ:

16-րդ դաս: Նվաճող մոնղոլները և քաքառ-մոնղոլական լուծը:

Մոնղոլ-անանապահները XIII դարում և նրանց խաները: Չինգիզ-խանը և մոնղոլական ցեղերի միավորումը XIII դարում: Չինգիզ-խանի բանակը: Չինգիզ-խանի նվաճումները: Ճակատամարտ Կալկա դեռի վրա:

Բաթու-խանը և ռուսական իշխանությունների նվաճումը նրա կողմից: Կիևի գրավումը, Վոսկի Հորդան և նրա Սարայ մայրաքաղաքը: Թաթարներին տրվող առևթը: Ռուս ժողովրդի ծանր դրությունը թաթար-մոնղոլական լծի տակ:

17-րդ դաս: Մոսկվան և Մոսկվայի առաջին իսխանները:

Մոսկովյան իշխանությունը թաթարական նվաճումից հետո: Իվան Կալիտան և նրա հետնորդները-ռուսական իշխանություն:

ների «հավաքիչներ»: Դմիտրի Դոնսկոյ և ռուս ժողովրդի առաջին հաղթանակը թաթարների դեմ (Կուլիկովյան ճակատամարտը):

18-րդ դաս: Լիսվան և Լեհաստան—Մոսկովյան պետության առևմտյան բեկամիներ:

Մոսկովյան պետության կազմավորումը XIII և XIV դ. դ. Ուկրաինական, բելոռուսական և ռուսական յերկրների գրավումը լիտվոլիների կողմից: Լիտվայի միավորումը Լեհաստանի հետ: Ուկրաինացիների, բելոռուսների և ռուսների ծանր կյանքը լեհական և լիտվական հափշտակիչների իշխանության տակ: Լիտվայի և Լեհաստանի հարձակումը Մոսկովյան պետության վրա:

19-րդ դաս: Լեհիքեմուրը և Վոսկի Հորդայի անկումը:

Մոնղոլական պետության թուլացումը: Լեհիքեմուրը և նրա արշավանքները: Սամարկանդը-Լեհիքեմուրի մայրաքաղաք: Լեհիքեմուրի պետությունը նրա մահից հետո:

20-րդ դաս: Կրկնություն:

IV ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ:

21-րդ դաս. Մոսկովյան պետությունը քաղաքական լծի վերջը: III-ի ժամանակ և քաքառ-մոնղոլական լծի վերջը:

Մեծ իշխան Իվան III: Ինքնուրույն ռուսական իշխանությունների միացումը Մոսկվային: Նովգորոդի միացումը: Ռուսական միասնական ազգային պետության ստեղծումը: Թաթար մոնղոլական լծի վերջը: Իվան III-ի պատերազմը Լիտվայի և Լեհաստանի դեմ: Իվան III-ը-«Թագավոր համայն Ռուսիայի»: Շինարարությունը Մոսկվայում:

22-րդ դաս. Ինչպես ելին կեղեքում գյուղացիներից Մոսկվայի պետության մեջ XV դարում

Մոսկովյան պետության հողատերերը (իշխանները, բոյարները, վանքերը, ծառայող մարդիկ, կալվածատերերը): Բոյարական կալվածատուն: Կուռ և բահրան: Տիրոջից հողազուրկ գյուղացիների հեռանալը և հեռանալու պայմանները: Հեռացման սահմանափակումը-գյուղացիների ամրացում և հողին:



**V ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ**

23-րդ դաս: Իվան IV և Մեծավզյան բաբարների շախմատումը

Իվան IV-ի մանկութունը և բոյարների ինքնիշխանութունը: Իվան IV-ը ինքնակալ թագավոր: Իվան IV-ի նվաճողական քաղաքականութունը: Պոլովոժեյի նվաճումը: Կազանի խանության նվաճումը: Աստրախանի գրավումը: Մոսկովյան պետութունը-բազմազգի պետութուն:

24-րդ դաս: Դաստասան բայարների հետ և Իվան IV-ի պատերազմները:

Բոյարների դավադրութունը: Իվան IV պայքարը բոյարների դեմ և ուլրիչնինայի կազմակերպումը: Գյուզացիներին կողոպտելն ուլրիչնիկների կողմից: «Յուրիի որվա» վերացումը: Գյուզացիների փախուստը հաբավային ծայրամասերը:

25-րդ դաս: Պատերազմ համառն Մեծբալթյան յերկրների Սիբիրի քաղաքաւթյան գրավումը:

Առևտրի սկիզբն Անգլիայի հետ:

Յերմակի հրամանատարությամբ կազակների արշավանքը Արևմտյան Սիբիր: Սիբիրական թագավորության գավթումը և նրան Մոսկովյան պետությանը յենթարկելը:

**VI ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԸ ՅԵՎ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐՈՒՄ**

26-րդ դաս: Լեհական պաների կողմից ռուսական պետությանն ստեղծելու փորձը:

Բորիս Գոդունովը: Սովը և ժողովրդական խռովությունները Գոդունովի ժամանակ: Լեհական պաների կողմից Ռուսաստանն ստեղծելու առաջին փորձը: Լեհացիների կողմից ուղարկած կեղծ Դմիտրի I-ը և նրա արշավանքը Մոսկովայի վրա: Լեհացիները Մոսկովյան: Ժողովրդական ապստամբությունները և բոյարների դավադրությունը լեհացիների դեմ: Կեղծ Դմիտրի սպանությունը և Շույսկու թագավոր դառնալը:

27-րդ դաս: Գյուզացիական առաջին պատերազմը ռուսական պետության մեջ:

Գյուզացիների ապստամբությունը: Գյուզացիական առաջին որդեկան Բոլոտնիկովը: Բոլոտնիկովի բանակը: Մոսկովայի պաշարումը: Բոլոտնիկովի պարտությունը: Ապստամբության ճնշումը և դատաստան ապստամբների հետ: Շարժման թուլության և Բոլոտնիկովի պարտության պատճառները: Շույսկու հրովարտակները գյուզացիներին վնասելու մասին:

28-րդ դաս: Պայքար լեհական հախճախիչների դեմ:

Լեհական պաների կողմից Ռուսաստանը ստեղծելու յերկրորդ փորձը: Կեղծ Դմիտրի II-ը: Տուլինյան ճամբարը: Շույսկու գահընկեցությունը: Լեհական պաների անկարգությունները Մոսկովյան: Մոսկովցիների ապստամբությունները լեհական ճնշողների դեմ: Ժողովրդական աշխարհագորը և նրա ղեկավարներ՝ Մինինը և Պոժարսկին: Աշխարհագորի շարժումը դեպի Մոսկով: Լեհական հախճախիչների արտաքսումը Մոսկովայից:

Միխայիլ Ռոմանովի ընտրությունը և գյուզացիական շարժման ջախջախումը:

29-րդ դաս: Քաղաքացիների և նմուծ ժողովուրդների ապստամբությունները XVII դարում

Ժողովրդի դրության վատթարացումը Ալեքսեյ Միխայլովիչի թագավորության ժամանակ: 1648 թ. բուխտը, ազի վրա հարկ դնելու պատճառով: 1649 թ. Զեմստոյական ժողովը և գյուղացիների վերջնական ճորտացումը: Մի քաղաքից մյուսն ազատ անցնելու արգելումն արհեստավորների համար: 50-ական և 60-ական թվականների քաղաքային ապստամբությունները: Բաշկիրական ապստամբությունը:

30-րդ դաս: Ուկրաինայի պայքարը լեհական սխրապետության դեմ և նրա միացումը Ռուսաստանին

Ուկրաինական գյուղացիների ճնշված դրությունը լեհական պաների իշխանության տակ: Կազակները: Զապորոժյան Սեչը: Գյուզացիների և կազակների պայքարը լեհական պետության



գեմ: Բողոքան խմբերիցից և 1648 թ. ապստամբությունը: Խմբի-  
նիցից Բանակցությունները Լեհաստանի հետ: Աջափայլի Ուկ-  
րաինայի միացումը Ռուսաստանին: Ուկրաինական գյուղացի-  
ները ազատագրումը պանական Լեհաստանից:

31-րդ դաս: Ռազինի պատերազմը կալվածատերերի դեմ:

Ունեվոր կազակները և մերկ մուրացիկները Դոնի վրա: Դոնի  
կազակ Ստեփան Ռազինը և ապստամբության սկիզբը ցարական  
կուսակալների և կալվածատերերի դեմ: Ռազինի արշավանքները  
գեպի Վոլգա: Մերձվոլգյան ճնշված ժողովուրդների միավորումը  
և ռուս գյուղացիների հետ կալվածատերերի դեմ մղած պայքարում:  
Վոլգյան քաղաքների գրավումը: Ռազինի պարտությունը: Դա-  
տաստան ապստամբների հետ: Ապստամբության պարտության  
պատճառները:

32-րդ դաս: Արևելյան Սիբիրի ժողովուրդներին  
հպատակեցնելը:

Ռուսական ջոկատների առաջխաղացումը գեպի Սիբիր:  
Դեմենկի ու խաբարովի արշավանքները: Ռուսական ամրոցները  
Սիբիրում: Ցարական կուսակալները և մորթեհարկի հավաքելը  
(յասակը): Ռուս վաճառականները և տերտերները Սիբիրում:  
Սիբիրի ժողովուրդների ճնշումը: Սիբիրի ժողովուրդների ապս-  
տամբությունը:

33-րդ դաս. Տնտեսությունը և պետությունը կառավարումը  
Ռուսաստանում XVII դարի վերջում:

XVII դարի Մոսկովյան պետության խոշոր հողատերերի  
տնտեսությունը: Դյուղացիների շահագործման ուժեղացումը: Գոր-  
ծարանները և ֆաբրիկաները Ռուսաստանում XVII դարում: Ներ-  
քին և արտաքին առևտրի աճումը:

Թագավորը և բոյարական դոման: Պրիկազները: Ատենադը-  
պիներն ու գրագիրները: Կուսակալական կառավարումը: Կաշառա-  
կերությունը Մոսկովյան կառավարման մեջ: Մոսկովյան զորքը:

34-րդ դաս. Ռուսաստանի կալսույթում XVII դարում

Կուսակալությունը Մոսկովյան պետության մեջ XVII դա-  
րում: Բարձրը և սովորությունները: Ռուսաստանի տնտեսական  
և կուլտուրական հետամնացությունը:

35—40-րդ դաս: Կրկնություն

## ՃԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍՅԱԿ

### ՏԱՐԵԹՎԵՐ

### ԱՆՅՔԵՐ

- 911 — Ուկրի պայմանագիրը հուլյանի հետ:  
988 — Բրիտանիայի մուտքը Ռուսիա:  
1147 — Առաջին հիշատակությունը Մոսկովյան մասին տարեգրության  
մեջ:  
1242 — Ալեքսանդր Նեվսկու հաղթանակը գերմանական ասպետների  
վրա («Սաուգաշարդ»):  
1240 — Ռուսական իշխանությունների նվաճումը Բալթիկի կողմից:  
1328 — Իվան Կալիտայի իշխան լինելու սկիզբը:  
1380 — Կուլիկովյան ճակատամարտը:  
1462 — Իշխան III-ի իշխան լինելու սկիզբը:  
1480 — Ռուսական պետության ազատագրումը թաթար-մոնղոլական  
լծից Իվան III-ի ժամանակ:  
1547 — Իվան IV-ի կողմից ցարական տիտղոս ընդունելը:  
1581 — Ցերմակի արշավանքը Արևմտյան Սիբիր:  
1606—1607 — Դյուղացիների և կազակների ապստամբությունը Բոլոտնիկովի  
ղեկավարությամբ:  
1612 — Լեհացիների արտաքսումը Մոսկովյանից:  
1648 — Կազակների և դյուղացիների ապստամբությունն Ուկրաինայում  
Բողոքան խմբերիցից ղեկավարությամբ, լեհական լծի դեմ:  
1649 — Դյուղացիների վերջնական ճորտացումը:  
1654 — Ուկրաինայի միացումը Ռուսաստանին:  
1670—1671 — Դյուղացիական ապստամբությունը Ռազինի ղեկավարու-  
թյամբ:

### ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

VII. XVIII Դ. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՅԵՎ  
ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ: ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ՅԵՎ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ:

1-ին դաս: Պետությունը I-ի քաղաքում սկիզբը

Պետություն I-ի թագավորման սկիզբը: Պատերազմ թուրքերի  
հետ: Ճանապարհորդությունն արտասահման: Մարեխների ռեակ-  
ցիոն ապստամբությունը և նրա ճնշումը:

Շվեդների դեմ վարած պատերազմի սկիզբը և պարտությունը  
նրա Նարվայի մոտ: Բանակի ռեֆորմը: Նեվայի գետաբերանի գը-  
րավումը: Պետերբուրգի հիմնադրումը և կառուցումը: Ժողովրդա-  
կան ապստամբությունները: Ապստամբությունը Դոնում Բուլա-  
վինի գլխավորությամբ: Ապստամբության պարտության պատ-  
ճառները:



2-րդ դաս: Պետրոս I-ի պատերազմներ Շվեդիայի և արևելյան յերկրների դեմ

Շվեդների ներխուժումն Ուկրաինա: Շվեդների ջախջախումը Պոլտավայի մոտ: Պյոտրի արշավանքը: Բալթիկ ծովի ափերի գրավումը: Հաշտությունը շվեդների հետ: Կայսրի տիտղոսի ընդունումը Պետրոս I-ի կողմից:

Պետրոս I-ի պայքարը Կասպից ծովի ափերի համար:

3-րդ դաս: Պետրոս I-ի ռեֆորմներ

Ռեֆորմները պետական կառավարչության մեջ. սենատի կոլլեգիաների կազմակերպումը, նահանգների բաժանելը:

Ռեֆորմները տնտեսության մեջ. դրամահարկ մտցնելը, մանուֆակտուրաների կազմակերպումը:

Ռեֆորմները լուսավորության բնագավառում. աշխարհական յերիտասարդներին արտասահման ուղարկելը, դպրոցների կազմակերպումը, լրագրեր հրատարակելը, նոր որացույց մտցնելը: Նոր կենցաղ:

Կալվաժատերերի և վաճառականների պետության ամրացումը ժողովրդի հաշվին:

4-րդ դաս: Ազնվական կայսրությունը XVII դարում

Ազնվականների տիրապետությունը Պետրոս I-ի մահվանից հետո: Ազնվականների իրավունքների ընդարձակումը Յեկատերինա II-ի ժամանակ: Ազնվականների կյանքը Յեկատերինա II-ի ժամանակ: Զորք գյուղացիների ծանր դրությունը: Ռուսական առաջին Գիտնական Լոմոնոսովը:

5-րդ դաս: Գյուղացիական պատերազմը Պուգաչովի դեկալտրությունը

Կազակների ապստամբությունը Յաիկ գետի մոտ: Դոնի կազակ Յեմելյան Պուգաչովն ապստամբության ղեկավար: Որենբուրգի պաշարումը: Ուրալյան բանվորները և նրանց առաջնորդներ Խլոպուշան և Բելոբորոդովը: Զնշված ժողովուրդների միացումը պայքարին: Բաշկիրները և նրանց ղեկավար Սալավաթ Յուլայեվը: Գյուղացիական պատերազմը Վոլգայի վրա: Կազանի գրավումը: Պուգաչովի նահանջը դեպի հարավ և պարտությունը Յարիցինի մոտ: Պուգաչովին ցարական իշխանություններին մատնելը և նրա մահապատիժը: Դատաստան ապստամբների հետ: Պարտության պատճառները:

6-րդ դաս: Յեկատերինա II-ի կողմից նոր յերկրների գտնվումն ու ժողովուրդների ստեղծումը

Ղրիմի նվաճումը և պատերազմը Թուրքիայի դեմ: Ռուսական մեծ զորավար Սուվորովը: Ուկրաինայի հպատակեցումը և ուկրաինական գյուղացիության վերջնական ճորտացումը:

Լեհաստանի բաժանումը:

Զավթումները Ղազախստանում: Ղազախստանի ժողովրդի հերոսական ապստամբությունը Սարիմ Դատովի ղեկավարությամբ, նրա ճնշումը:

7-րդ դաս: Կրկնություն:

VIII ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՅԵՎՐՈՊԱՅԻ ԺԱՆԴԱՐՄ

8-րդ դաս: Բուրժուական հեղափոխությունը Ֆրանսիայում

1789 թ. հեղափոխության սկիզբը (Բաստիլիայի առումը): Հեղափոխական շարժումը յերկրում և բուրժուական հեղափոխության հաղթանակը: Ալստրիայի և Պրուսիայի ինտերվենցիան: Հանրապետության հայտարարումը և թագավորի մահապատիժը: Յակոբինները և նրանց առաջնորդներ Ռոբեսպիերն ու Մարատը ինտերվենտների ջախջախումը: Յակոբինական տեռորը: Բուրժուազիայի հաղթանակը: Բուրժուական Ֆրանսիայի առաջնորդ Նապոլեոն Բոնապարտը: Ֆրանսիական հեղափոխության նշանակությունը:

9-րդ դաս: Յեկատերինա I-ի և Պավել I-ի պայքարը բուրժուական հեղափոխություն դեմ

